

զինը, գուժարված զիւղացիներէջ արած ծա-
նապարհի ծախսի հետ:

Վերջացում ենք խօսքը կրկնելով թէ՛
մենք համարում ենք քաղաքացու խի տնո-
րէնութեանը, որովհետեւ նա քաղաքական օգուտ
կը բերէ, — բայց համարելով այդ տեսակ տնո-
րէնութիւնները պաշտօնական և ոչ
թէ երկրի տնտեսական կանօնաւոր դար-
գացումից առաջացած բնական միջոց,
նշում ենք այդ և սորա նման շատ անգամ
հրատարակված տնօրէնութիւններին, որպէս
անցաւ որ, թոյլ և առեւտրական միջոց-
ների վրա: Ուրեմն մենք կարող հե-
տեւել հարցը չափարկելով մինչև երբ պիտի
անհոգ լինենք, երբ պիտի սկսենք մտածել
արմատական և տեղական միջոցների վրա,
հաստատելով որ ոչ, կանօնաւոր և
արդար տնտեսական յարաբերութիւնները
քաղաքի և գիւղի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԵՒՏԻՄԱՆ ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

Ապրիլի 10-ին կատարվեցաւ Թիֆլիսի
Առևտրական բանկի բաժնետիրների (ակ-
ցիոներների) ընդհանուր ժողովի նիստը նախա-
գահութեամբ Կ. Ի. Բէյլի: Ընդհանուր
ժողովում կարգավեցաւ բանկի խորհրդի
կողմից արած զեկուցում (գօյալ), որ պա-
րունակութեամբ իր մէջ բանկի կարծառու հա-
շիւը, ապա եղաւ ընտրութիւն խորհրդի
երկու անդամների և առաջարկվեցաւ տե-
լացնել բանկի մայր գումարը՝ 500,000 ֆ
դարձնելով 1,000,000 ֆ:

Հաշիւից, որ ՚ի դէպ ասելով զրաժ է
շատ սխալներով և ուստաց լեզուի կանօն-
ներին դէմ, հաշիւից երեւում է որ՝ բանկի
տարեկան ընդհանուր շրջական գումարը
եղել է 75,045,198 ֆ 18 կօպ, բանկի մի-
ջոցներ եղել են ա) 500,000 մայր գումարը,
որ երեք զանազան ժամանակներ է հատու-
ցած, բ) դրված գումարը (վիլլա) 777,848
ֆ 24 կ., գ) ընթացող հաշիւով՝
5,440,856 ֆ 34 կ. և դ) արքունական
բանկի Թիֆլիսեան բաժնից վերցրած է մաս-
նաւոր ընթացող հաշիւով և
դեղձում ֆ արած մասը հաշիւներով
1,705,530 ֆ 62 կ.:

Անցեալ տարին զեկուցած են 1,117 մուր-
հակ 2,231,231 ֆ 26 կ. գումարի: Այս
մուրհակներից ստացվել է 1,139,959 ֆ.
92 կ., մնացել է ստանալու 1,091,271 ֆ.
34 կ.: Այս միջոցին բանկը չէ ունեցել ոչ
մի բողոքած (պրօտէստ արած) մուրհակ:

Բոլոր ծախսերը դուրս գալուց յետոյ,
մնացել է զուտ արդիւնք 34,046 ֆ 17 կ.,
որից 1,702 ֆ 31 կ. դարձնելու է պատ-
րաստի մայր գումար (զապահով կա-
պիտալ), իսկ մնացեալ 28,925 ֆ., այսինքն
11 ֆ 57 կ. խրաքանչիւր ակցիայի կամ
բաժնի վրա արվում է որպէս դիվիդենդ
(օգուտ): Անցիայի իսկական արժողութիւնն է
200 ֆ.:

Հաշիւը համաձայն առաջարկութեան նա-
խագահի վաւերացրին ժողովի անդամները,
որը էին մեր գլխաւոր վաճառականները: Ոչ
ոչ ուշադրութիւն չը դարձրեց, օրինակ, այն
տակն, թէ արդեօք ամեն մուրհակի ժա-
մանակը լրանալուց փողերը մտնում են բանկը,
թէ մուրհակը փոխում էին, որ ՚ի հարկէ
մեծ զանազանութիւն է անում զարժեքի հա-
մար: Իսկ գլխաւորը այն էր, որ քննողական
մասնաժողովը (ընդհանրապէս կօմիսիա) ան-
ցեալ տարի ընտրված չէ եղել և չէ քննել
հաշիւները, այնպէս որ հաշիւ ձեռք լինելը
հաստատում է բանկի խորհուրդը հիմնվելով
կառավարչի և գլխաւոր բուխջալարների (հա-
շուպահի) ներկայացրած թուանշանների
վրա:

Քննողական մասնաժողովի մասին եղաւ
հետաքրքրելի վիճարանութիւններ, որոնք
մասին մենք մեր պարտաւորութիւն ենք հե-
մարում ծանօթացնել ընթերցողին: Բաժնի
նորոշներից մինը յայտնեց իրան դարձաւ
թէ ինչի բանկի հաշիւը չէ քննել քնն-
ողական մասնաժողովը, կամ ինչի այդ մա-
նաժողովի ընտրութեան մասին չէ առաջա-
կուած այժմ ընդհանուր ժողովին: Նախ
գահը առանց որ և է վիճարանութեան պա-
տաստանեց, թէ բանկի կանօնադրութեա
56 և 61-որդ յօդվածների դրութեամբ ն
կարծում է, որ մասնաժողովի ընտրութիւն
աւելորդ է, երբ ընդհանուր ժողովը ուզող
համարում հաշիւը, վասնորոյ նախագահ
կարծում է, որ այդ խնդրի մասին վիճարա-
նութիւնն անգամ աւելորդ է: Ընդհանուր
ժողովի բազմութիւն կազմող վաճառական-
ները միտքերան համաձայնեցան նախագահի
հետ և տարեկան հաշիւների քննելը աւե-
լորդ համարեցին:

Բայց ինչ է զրաժ այդ յօդվածների մէջ:
Յօդ. 56-ում զրաժ է՝ Ընդհանուր ժո-
ղովի անհրաժեշտ պարտաւորութիւնն է՝
ընտրել խորհրդի անդամներին և մի մասնա-
ժողով տարեկան հաշիւները քննե-
լու համար (§ 61): Իսկ 61-որդ յօդվ. զը-
րաժ է՝ Եթէ բանկի հաշիւը վաւերացրած
չի լինի ընդհանուր ժողովից, այն ժամանակ
նա կարող է հաշիւը վերատուգելու հա-
մար նշանակել մի նոր մասնաժողով
և այնուհետեւ մասնաժողովի զեկուցում
քննելուց յետոյ, նշանակվում է նոր ընդ-
հանուր ժողովը:

Թէ և այդ յօդվածների միտքը շատ պարզ է,
այսինքն առաջին յօդվածը խօսում է այն
մասնաժողովի վերա, որ ընդհանուր ժողովը
ընտրում է խորհրդի անդամների ընտրութեան
ժամանակ տարեկան հաշիւները
առ հասարակ քննելու նպատակով, իսկ երկ-
րորդ յօդվածը խօսում է առանձին մաս-
նաժողովի վերա, որ ընտրվում է միայն այն
ժամանակ, երբ ընդհանուր ժողովը չէ վա-
ւերացրել հաշիւը, — բայց այնուամենայնիւ
ընդհանուր ժողովը ընդունեց նախագահի
կարծիքը: Իսկ նախագահին այդպիսի մեկ-
նութեան համար փոտահութիւն տուեց այն
հանգամանքը, որ 56 յօդվածից յետոյ փա-
կագծում զրաժ էր 61-որդ յօդվածը...:

Փաստարանական դատողութիւն ..
Նոյն կանօնադրութեան 67-որդ յօդ. մէջ
փակադրում ցոյց է տուած 60-որդ յօդ-
վածը: Ուրեմն 67-որդ յօդ. նշանակութիւն
չը պիտի ունենայ:

Այժմ դարձում ենք ընթերցողի ու-
շադրութիւնը խորհրդի երկու անդամների
ընտրութեան վրա:

Նախագահը յայտնեց, թէ խորհրդի ան-
դամութիւնը թողել է պ. Ծօրինեանը և
թողնում է ինքն, որովհետեւ մասնաւոր գոր-
ծերով զբաղված լինելով, ժամանակ չէ գրո-
նում բանկի գործերով պարտաւր: Վերո-
յիշեալ բազմութիւնը միտքերան խնդրեցին
պ. Բէյլիին մնալ խորհրդի անդամ և նա-
խագահ, — և պ. Բէյլիին համաձայնեցաւ:
Ուրեմն մնում էր մի ազատ տեղ: Խորհրդի
անդամներից երկուսը (պ. պ. Օնիկով և Նա-
դիրեանը) յայտնեցին իրանց կարծիքը թէ
հարկաւոր է ընտրել զրազէտ և կրթված
մարդ այդ պաշտօնի համար, նա մանաւանդ,
որ խորհուրդի միւս անդամները մեծ մա-
սամբ վաճառականներ են: Նախագահը չը
համաձայնեցաւ այդ մտքին, յայտնելով որ
հարկաւոր է անպատճառ վաճառականին
ընտրել, իսկ ինքն առաջարկեց երկու անուն-
ներ՝ մինը բարձր պաշտօնականի և միւսը
վաճառականի: Բարձր պաշտօնականը հրա-
ժարվեցաւ, իսկ նախագահի առաջարկված
վաճառականը ընտրվեցաւ ոչ թէ քուէ ար-
կու թէ ամբ, այլ թէ թէ երկուսն էլ համաձայն

նախագահի և ժողովի բազմութեան ցան-
կութեանը:

Ժողովում կային մօտ 60 անդամ, իսկ
նախագահի առաջարկածը ստացաւ միայն 21
ձայն, մնացեալ ձայները, թէ և 21-ից պակաս,
ստացան միւս անձինք: Թէ և 60 թուի հա-
մար 21 ձայն առաւելութիւն չէ,
բայց ընդհանուր ժողովը դարձեալ ընդունեց,
որ այդ ընտրութիւնը իրաւական է և վա-
ւերացրեց: Թէ և բաժնետիրներից մինը ցոյց
էր տալիս այդ տեսակ ընտրութեան ապօրի-
նութիւնը, — բայց վերջ ՚ի վերջոյ եղաւ այն
ինչ որ կամենում էին իշխանութիւն ունե-
ցողները:

Բոլոր վերեւ ասած իրողութիւնները աչքի
առաջն ունենալով, կարելի է արդեօք ընդ-
հանուր ժողովի նիստը օրինաւոր համարել:
Առաջարկում ենք այս հարցը մեր ընթեր-
ցողներին, Թիֆլիսեան առևտրական բանկի
ակցիոներներին և այդ բանկի հետ գործե-
ր ունեցողներին:

Խորհրդի կողմից առաջարկված երրորդ
խնդիրը, այն է մայրադուր կրկնապատկելը,
վճուկեցաւ այնպէս, որ խորհուրդը պիտի
խնդրուի տայ կրկնապատկելու մասին և
իրաւունք ունենայ առաջին անգամ ակցիա-
ներ հրատարակել մինչև 250,000 ֆ., իսկ
միւս 250,000 ֆ. ակցիաների համար հրա-
րէր առանձին ընդհանուր ժողով:

Վերջապէս տեսնում ենք, որ խորհուրդը
կամենալով ժողովրդականութիւնն ևս ստա-
նալ, առաջ է բերում այն իրողութիւնը, որ
1117 վերսիլից 619-ը 1000 ուրիլից պա-
կաս են եղել, յորեմն, ասում է նա, բանկի
իրէդիտից օգուտ են քաղել մանր վաճառա-
կանները և ոչ թէ մեծ առևտրական տը-
ները (?!):

Կարծես թէ մի մեծ առևտրական տուն
ի կարող մի քանի մանր վեքսիլ
ներկայացնել...

Հրաւիրում ենք մեր ընթերցողի ուշադրու-
թիւնը հետեւեալ թուանշանների վրա՝ վերսիլ
ներկայացողների թիւը եղել է 348, վերսիլ
տուղների թիւը՝ 551, իսկ վերսիլի միջին
զոււմարը եղել է 1997 ուրիլ: Չենք կար-
ծում, որ երբ վերսիլի միջին գումարը
հասնում է մօտ 2000 մանէթի, — չենք կար-
ծում որ այդ տեսակ կրէդիտը կարող է
մանր կրէդիտ անուանվել:

ՆԱԽԱԿ ՎԵՐՍԻՍԻՆԱՅԻՆ

(Թիւաւու գաւառում)

Այս տարի մեր ու Սիւնախու գաւառների
ժողովրդականաց գրութիւնը բոլորովին աննա-
խանելի է, պատճառը հացի պակասութիւնն է,
որին ուրիշ խօսվում ասում ենք սով: Բայց հար-
կաւոր է իմանալ, սովի պատճառն ինչ է:

Այդ հարցի պատասխաններ շատ ունենք ա-
սելու, օրինակ ինչպէս յայտնի է անցեալ տարիքը
անհոգ անցան միւս համար, մէկ կողմից խաղողի
հիւանդութիւնը, միւս կողմից կարկուտ բոլորովին
զրկելին խեղճ ժողովուրդին իրանց կենսական
պարտաւոր պիտուքներից: Այդպիսի վնասական
լուց յետոյ ժողովուրդը ընկաւ խղճութեան մէջ,
այն և հարստահարութիւնը մեր պատուելի կօ-
պիտալիստների կողմից ի կարմիր խնձոր չէին
մեզ համար, բայց մեր ազգաբնութեան գլխաւոր
պատճառը մինչև օրս չենք հասկացել և չենք էլ
կամենում իմանալ, դա մեր ծուլութիւնն է որոյ մէջ
ընկած ենք դարերով:

Պարբերական հրատարակութիւնը շատ են խօ-
սել մեզ խեղճ գաւառ հատուած հարստահարու-
թեանց վերա, բայց ոչ մի վաճառական-հարստա-
հարիչ այս քարոզները լսելով չի հրաժարվում իրա-
նագութ պահանջներից և չի դարձնում մեր մուր-
հակներ, որոնցով պարտ ենք նորան քանի թու-
մաններ, գուցէ եթէ պարտականը հինգ թու-
մանի տեղ չորս թուման ձեռքին դառնայ դէպի
փողատէրը, այս վերջինը զիջողութիւն անելով կը
գարձուցանէ մուրհակը, բայց այս դրութեան մէջ
մեզ չի տուել թումաններով փող մեր պարտա-
քերը վճարելու համար: Սորանից կարելի է եզրա-
կացնել, որ մեր դրութիւնը չի ներում որ պարտ-
քեր վճարենք և վաճառականներն էլ չեն բաշխե-
լու մեզ իրանց մուրհակներն և տարեց տարի կամ
պէտք է անկացնեն ասկոսները, և կամ ժամա-

նակը լրանալուն պէս յայտնեն մեր մուրհակները
դատաւարներ, որի կանխադ համաժող պիտի ծա-
խուի մեր վերջին գոյութեան միայնակ նեցուկ մի
այգին, որից յոյս ունէինք ստանալ այնքան ար-
դիւնք, որ կարողանային մեր պարտքերը վճարել
մեր ընտանիքը կերակրել, մեր հարկերն վճարել
մէկ խօսքով մեր բոլոր կարիքը լցուցանել, բայց
զրկուելով այդ միակ յոյսից մեզ ինչ է սպասում,
զանից դուռն ողորմութիւն հաւաքել ինչպէս վար-
վում ենք այսօր:

Որեք որ վատաբանում են վիճակը, թէ որքան
ժամանակ կուտէ այդ հարուածը, ոչով չի կարող
զուշակել: Իմ կարծիքով խղճութիւնը արդէն ար-
մատացել է մեր մէջ և նորան արմատախիլ անե-
լու համար հարկաւոր է շատ աշխատութիւն հա-
տարակ դասի կողմից: Մենք աղքատներն ա-
ւատացած ենք, թէ մեր այժմեան իրողութիւնը մի
պատիժ է, որ ուղարկում է Աստուած մեր չարա-
գործութեան պատճառաւ, դորա համար է որ տա-
րին քանի անգամ հաւաքուելով խումբ խումբ
ոտարբերի, զլխարաց, մատաղներով զիմում ենք
դէպի բարեխօսութիւնը սուրբ Ալլահի (բարիի),
բայց անօգուտ, հիւանդութիւն բաժանողը և կար-
կաս կողորոշել չեն լսում ոչ մեր աղաչանքը և ոչ
էլ սուրբ Ալլահի կողմից միջնորդութիւնը: Սերինը
ընթերցող, մի ազգ, որ գգում է իրա լծի ծան-
րութիւնը, հասկանում է նորա պատճառը և հետե-
ւանքը, երբ որ իցէ այդ ճնշողութեանց կազատուի,
մենք հասկանում ենք որ վատթար վիճակի մէջ
ենք, բայց չենք հասկանում որ նորանից աղա-
տուելու համար մեզ հարկաւոր է աշխատութիւն,
աշխատութիւն և դարձեալ աշխատութիւն:

Ինչպէս վերեւ յիշեցի մեր թշուառութեան զը-
խաւոր պատճառը մեր ծուլութիւնն է, նա է որ
ժամանակի հոսանքի նետ կլանում է մեր գոյու-
թիւնը, մի քանի տարուց յետոյ, եթէ այսպէս աշ-
խատելու լինենք, կտենեմք որ մեր խեղճ դասը
բոլորովին կկորչի, թէ ինչ անարդարապետութիւնը
են տարածվում մեր մէջ հացի պակասութեան
պատճառաւ, դա յայտնի է միայն Աստուծոյ և մեզ
խեղճերիս... այս ցիւրից հանելոյ համար մեզ
հարկաւոր են ճշտու ու աշխատող ձեռքեր, մտա-
ծող ու խոհմ գլուխներ... Մենք ունենք ձեռ-
քեր, բայց նոքա զբաղւած են, ոչ թէ հողագոր-
ծութեամբ ու աշխատութեամբ, այլ նոքա ամուր
դրուած են մեր ծուլներին ասիւ ժամանակները
չուաքներում, իսկ ցուրտ ժամանակը մեր օճախ-
ների կողքին նստած:

Կովկասը երեք գլխաւոր ազգութիւնների ունի
բանած իր վերա վրացիք, հայք և թուրքեր: Վրա-
ցիք այդ ազգութիւնների մէջ ամենամոյլ հասա-
րակութիւնն են ուրեմն և ամենախեղճ գրութեան
մէջ գտնուողներն: Նոքա չունեն ոչ վաճառակա-
նութիւն, ոչ արուեստագիտութիւն, ոչ երկրագոր-
ծութիւն, նոքա առանձնապէս դրաղուած են այ-
դպանութեան վրացին, իւր այգուն նայելով
թեկերը բարձր, ծուլները ծալած ու բերանը
բացած, աղաղակում է թարթած մի առաժի պէս
արմուտ, արմուտ գուշ աղվմայ սալը ուխարի
(տանձիկ տանձիկ, ընկիր բերանս կուրք վերել)
Մենք այստեղ թթուած ազգասիրութիւն չենք քա-
րողում, մենք անաշատութեամբ խօսում ենք մեր
եղբայր պակասութեանց վերա: Մենք չենք ուրա-
նում, որ վրացուն բերքերն անաշոյլ են, բայց եթէ
նորա այգին ամենաառատ պտուղ տայ, դարձեալ
դա մի այնպիսի անշան անտեսականութիւն է,
որ երբէք չի կարող լցուցանել, ժամանակի պա-
հանգումներն նայած, նորա կարիքներն ու խեղճ եղել
է մի ժամանակ, որ մեր պապիքը մի և նոյն տնտե-
սականութեամբ կառավարել են լիապէս իրանց
ընտանիքը, բայց այն ժամանակի պահանջներն
ուրիշ են եղած և այժմ ուրիշ են, դորա համար
երկար խօսելն աւելորդ ենք համարում: Մեր հարե-
ւան ազգերը, օրինակ Վեդիկները Զաքարթաւու նա
հանգում, մի քանի զիւղորայքում, Մուսուլում, կա-
նում, Ալիարաթում, Ալիբեկուլում, Ղարաղա-
նում պարտաւորվում են այդպանութեանը, նոքա ու-
նեն այնպիսի այգիներ ինչպէս մենք, բայց նոքա
մեղպէս միայն այգեպանութեամբ չեն պարտաւորվում,
նոքա պարտաւորվում են բացի դրանից հողագոր-
ծութեամբ և չորամաղահութեամբ և հենց դա է
պատճառը, որ մեզանից հազարաւոր մարդիկ այժմ
Զաքարթաւու հանանցի վիւղորայքում ողորմու-
թիւն են հաւաքում, թող ոչով չի կարծի որ մեր
երկիրը ընդունակ չէ հողագործութեան, մեր Ալա-
ղանեան հովիտը շատ պողպար է և բոլորովին
կուսական դրութեան մէջ, հարկաւոր տարի է
որ մեր երկիրը չի ճաշակել արօրի կենսաբեր հա-
ղորդակցութիւնը:

*) Դա մի հոյակապ վանք է Թելաւից 8 վերստ
հեռավորութեամբ, այստեղ ժողովվում են ուխտա-
ւորներ Արատանու. ամէն կողմերից ըստ մեծի
մասին սեպտեմբերին, այդ օրն նորա ուխտագնա-
ցութեան օրն է: